

# ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ

## Կիրակի, 13 Յուլիսի, 2008

ՀՀ Արերմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի յանձնախմբի կազմակերպութեամբ, Կիրակի, Յուլիսի 13-ի երեկոյեան ժամը 7:00-ին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Գլխնդէլի «Արարատ» մասնաճիւղի սրահում տեղի ունեցաւ հրապարակային հանդիպում զրոյց, ՀՀ Բիւրոյի անդամ Վիգէն Բաղումեանի հետ, որը կարծատեւ այցելութեամբ Իրանից ժամանել է Գլխնդէլ: Միջոցառմանը ներկայ էին ՀՀ Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանը, Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իգմիրլեանը եւ շուրջ 400 ներկաներ, մեծ մասամբ՝ Կալիֆոնիայի նահանգում հաստատուած նախկին իրանահայեր: Հանդիպման բացումը կատարեց Հանրային Կապի գրասենեակի պատասխանատու Սարո Նազարեանը, որը ողջունելով եւ բարի գալուստ մաղթելով բեմ հրաւիրեց հիւր բանախօս՝ Վիգէն Բաղումեանին եւ Կենտրոնական Կոմիտէի անդամուհի Անահիտ Ստեփանեանին, որպէսզի վարի զրոյցը:

Վիգէն Բաղումեանը պատասխանելով իրանահայութեան ներկայիս իրավիճակի եւ Իրան-Հայաստանի յարաբերութիւնների վերաբերեալ տրուած հարցերին, հանգամանօրէն անդրադարձաւ Հայաստանի անկախացումից յետոյ իրանահայութեան ունեցած խիստ կարեւոր դերին՝ երկու բարեկամ երկրների՝ Իրանի եւ Հայաստանի միջեւ քաղաքատնտեսական կապերի առաւել ամրապնդման ու ընդարձակման առումով: «Հայաստանի անկախացման առաջին տարիներին իրանեան մամուլում ոչ-յաճախ էր խօսուում Հայաստանի անկախ պետականութեան մասին, սակայն իրանահայութեան տարած լրբիստական ջանքերի եւ ապա Հայաստանի ու Իրանի միջեւ դիւանագիտական կապերի հաստատման ու երկու երկրների պետական այրերի փոխայցելութիւնների արդիւնքում հետզհետէ աւելի յաճախակի դարձան Հայաստանին վերաբերող իրադարձութիւնների ու քաղաքական զարգացումների անդրադարձները իրանեան մամուլում եւ հասարակական շրջանակներում, իսկ այսօր երկու երկրների ժողովուրդների համոզմամբ տարածաշրջանում չկան բարիդրացիական այնպիսի հզօր ու փոխշահաւետ կապեր, ինչպիսին առակայ է Իրանի ու Հայաստանի միջեւ: Պէտք է ասել, որ իրանահայութիւնը մեծ ու նշանակալից դեր ունեցաւ երկու երկրների բարեկամութեան ամրակայման խնդրում»,- շեշտեց Վիգէն Բաղումեանը եւ այնուհետեւ խօսեց Արցախեան հարցով Իրանի պաշտօնական դիրքորոշման մասին, նշելով, որ Իրանը միշտ էլ հանդէս է եկել Արցախեան հարցի խաղաղ կարգաւորման եւ բանակցութիւնների գծով հարցի լուծման յայտարարութիւններով, ինչը նաեւ բխում է տարածաշրջանում Իրանի հետապնդած քաղաքական շահերից:

Իսկ ինչ վերաբերում է Միացեալ Նահանգների ու Իրանի միջեւ ռազմական գործողութիւնների բռնկման հաւանականութեան շուրջ շրջան առած շշուկներին, Վիգէն Բաղումեանը յայտարարեց, որ դա ոչ միայն աւերիչ հետեւանքներ կունենայ երկու երկրների համար, այլ նաեւ վնասաբեր ազդեցութիւն կը թողնի տարածաշրջանի երկրների, մասնաւորաբար Հայաստանի վրայ: Նա յոյս յայտնեց, որ ռազմական գործողութիւնների սրման փոխարէն, Իրանի եւ Միացեալ Նահանգների միջեւ կստեղծուեն դիւանագիտական չափաւոր յարաբերութիւններ, առանց փորձ կատարուելու Իրանին ներգրաւել ամերիկեան ազդեցութեան գօտում:

Միջոցառման ընթացքում Վիգէն Բաղումեանը պատասխանեց նաեւ ներկաների բազմաբնոյթ հարցերին՝ Իրանի Ատրպատականի նահանգի հայութեան եւ հայկական կալուածների ներկայիս իրավիճակի, իրանահայութեան արատագաղթի ծաւալների եւ հայ-թուրքական յարաբերութիւնների հարցով Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Սերժ Սարգսեանի վերջերս արած յայտարարութիւնների վերաբերեալ: ՀՀ Բիւրոյի անդամ Վիգէն Բաղումեանը շեշտեց, որ ինչպէս յայտարարել է Բիւրօն, Հայոց Ցեղասպանութեան փաստը չի կարելի քննարկման միւթ դարձնել եւ բացառուում է այդ փաստով որեւէ յանձնաժողովի կազմաւորումը: «Մենք այդ առթիւ մեր տեսակէտը յստակօրէն յայտնել ենք Հայաստանի նախագահին եւ պետական այրերին եւ վստահ ենք նրանք եւս համոզուած են, որ չի կարելի քննութեան առարկայ դարձնել Հայոց Ցեղասպանութիւնը: Ըստ իս՝ նախագահի յայտարարութիւնը աւելի շուտ մարտավարական նպատակ է հետապնդել»,- ասաց նա:

Իր ելոյթի աւարտին Վիգէն Բաղումեանը կարեւորեց նաեւ Հայ Դատի հետապնդման եւ Հայաստանի հզօրացման ու բարգաւաճման ուղղութեամբ ամերիկահայութեան գործադրած ջանքերը: Միջոցառումը փակ յայտարարութեց երեկոյեան ժամը 9:40-ին:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՀ Արերմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: